

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 30.09.2020թ. թիվ 2011688570 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<09>> 11 2020թ. 7-13- 14179

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե. Կարապետյանս, վերանայելով Հեկտոր Սահակյանի ՄԴ/146243-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ջավարյան փողոցի 1 շենքի 7 բնակարանի բնակիչ Հեկտոր Սահակյանը (էլեկտրոնային փոստի հասցեն՝ hektor.sahakyan@mail.ru) դիմումով կնդրել է վերանայել վարչական տույժ նշանակելու մասին 30.09.2020թ. թիվ 2011688570 որոշումը՝ նշելով, որ իրավախախտումը կատարել է ոչ միտումնավոր:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ թիվ 2011688570 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը** (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախագգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին, իսկ նույն որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետի, լուսացույցի կարմիր ազդանշանն, այդ թվում նաև՝ թարթող, արգելում է երթևեկությունը: Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի «Կանգ-գիծ» գծանշման (կամ 6.16՝ «Կանգ-գիծ» նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար, ինչպես նաև այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար: **Ըստ նույն որոշման 19-րդ կետի՝ դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողը ձեռքը բարձրացնելու դեպքում այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ արգելակելու կանգնել կանոնների 18-րդ կետում նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը:**

Իրավախախտումն ամրագրած տեսանյութի ուսումնասիրությամբ ակնհայտ է դառնում այն փաստը, որ 15.09.2020թ. ժամը 11:52-ին Երևան քաղաքի Հալաբյան-Արզումանյան-Հրազդանի կիրճ փողոցների խաչմերուկի հատվածում առկա է «Կանգ-գիծ» գծանշումը և այն հատելու պահին միացված է եղել լուսացույցի դեղին արգելող ազդանշանը: Այսպես՝ տեսանյութի 11:52:41-րդ վայրկյանին միանում է լուսացույցի դեղին արգելող ազդանշանը, երբ դիմումատուի տրանսպորտային միջոցը գտնվում էր «Կանգ-գիծ» գծանշման առջև: Դիմումատուի տրանսպորտային միջոցը «Կանգ-գիծ» գծանշումը հատում է տեսանյութի 11:52:43-րդ վայրկյանին՝ լուսացույցի դեղին արգելող ազդանշանի առկայությամբ: Փաստերի վերլուծության արդյունքում հերքվում է նաև դիմումատուի կողմից «Կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 19-րդ կետի պահանջների ռեժիմում արարք կատարելու հանգամանքը, քանի որ դիմումատուն «Կանգ-գիծ» գծանշումը հատելուց առաջ գտնվել է անշարժ վիճակում, այսինքն հնարավորություն է ունեցել կանգնել առանց կտրուկ արգելակման:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազմը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 30.09.2020թ. թիվ 2011688570 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Հեկտոր Սահակյանին:



[Handwritten signature]
Ե. Կարապետյան